

## ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅԵՐԸ

Պարսկաստանի հայարնակ օազներից մէկն էլ Նոր-Ջուղան է իր շուրջ ձգուած բազմաթիւ հայ գիւղերով: Քանի որ «Մուրճը» սկսել է ծանօթացնել Պարսկաստանի զանազան մասերի հետ, աւելորդ չը համարուի և այս նկարագրութիւնը:

Նոր-Ջուղայի բնակիչների թիւը 1901 թուականի չնչազրութեան համաձայն՝ հասնում է՝ 524 տան (ընտանիքի), որոնց կարելի է բաժանել հետեւեալ կերպով.

- 1) Քահանաներ, որոնք ձեռնադրւում են Հնդկաստանի և Ջաւայի վիճակների յոյսով, և որ 4—5 տարի փոխառփոխ վիճակաւորուելով՝ վերադառնում են բաւական գումարով: Քահանաների այժմեան թիւը հասնում է 22-ի:
- 2) Ուսուցիչներ, որոնց երկսեռ խմբի թիւը տղայոց «կենտրոնական» և օրիորդաց «Ս. Կատարինեան» ազգային դպրոցներում հասնում է 23-ի, իսկ բողոքականների երկսեռ դպրոցներում մօտաւորապէս 35-ի:
- 3) Կալուածատէրեր, որոնք պարապում են այգեգործութեամբ և պարտիզպանութեամբ, սակայն ամառն երաշտից ստիպուած լինելով եզների միջոցով ջրհորներից ջուր հանել արմտիքը ջրելու համար, ենթարկւում են աւելորդ ծախքերի և հետեւաբար այնքան էլ չեն օգտուում, թողնելով դեռ այն, որ յաճախ որթերը բոլորովին ցրտահար են լինում:
- 4) Արհեստաւորներ, որոնք ընդհանրապէս պարապում են ոսկերչութեամբ, հիւսնութեամբ, ժամագործութեամբ, դերձակութեամբ, կօշկակարութեամբ և «չիրաչիւթեամբ» (խմիչքներ պատրաստել և վաճառել): Գտնւում են նաև բժիշկ, նկարիչ, քանդակագործ, քարտաչ, կտաւագործ \*), դարբին և այլ արհեստաւորներ:

\*) Ջուլհակութիւնը առաջ մեծ դեր է խաղացել Նոր-Ջուղայում, իսկ այժմ հալիւ թէ մի քանի գործարաններ ճարուեն:

5) Վահագնացիներ, որոնք առևտրական յարաբերութիւններ ունենալով լիվիայի, Հօլլանդիայի, Ռուսաստանի, Հնդկաստանի, Բաղդադի և Պարսկաստանի այլ և այլ քաղաքների հետ, արտահանուին նուշ, բամբակ, աֆիոն, ծխախոտ, գինի, քաթերայ (խէ՛ դասան մորթի, չոր մրգեղէն, գուլբայ, կաշի (ոչխարի, ղուէսի և կզաքիսի), զանազան դաճած կտաւիք և տեղակ մանրուներ: Իսկ փոխարէնը ներմուծում են զանազան գազէն (գլխաւորապէս չիթ և մահուղ), չիթեղէն, բիւրեղեղէն, խմբէ՛, նաւթ, շաքար, մետաղ և բազմատեսակ եւրոպական մարուներ:

6) Գրագիրներ, որոնք ծառայում են ընդհանրապէս եւրոպական բանկային, հեռագրական և առևտրական հաստատութիւններում:

7) Զրիակեր դասարկաւորչիկներ, որոնք ապրում են կամ Հնդկաստանում և Զաւայում գտնուող ազգականների տարեկան նպաստներով և կամ տեղական «Աղքատախնամ ընկերութեան» ամսական առըքերով: Սրանց համար «ճակատի քրտինքով հաց ճարելը» վաղուց արդէն կորցրել է իր նշանակութիւնը:

Բոլոր բնակիչները ապրում են թրծուն և արեւաթուրք աղիւսից կառուցուած տներում, որոնք օդի չորութեան պատճառով՝ հարիւրաւոր տարիներ են դիմանում:

Համարեա բոլոր տները, չը նայելով արտաքին անչքութեան, բաւական ճաշակով են պատրաստուած: Ունեն ամառուայ և ձմեռուայ առանձին բաժանմունքներ: Իւրաքանչիւր տուն ունի իր ծաղկանոցը և առանձին ջրհորը՝ առատ ախորժահամ և ախանակիտ ջրով: Հին հոյակապ տներից ոմանք ունեն և՛ ընդարձակ աւազաններ, իսկ շատերն էլ՝ պարտէզներ:

Հարուստի սրահից սկսած մինչև վերջին աղքատի բնակարանը, առանց բացառութեան, զարդարուած են զանազան պատկերներով և ըստ կարելոյն կահաւորուած:

Տներից շատերը ունեն իրանց առանձին գինետունը, հընձանն ու կարասները: Հմուտ ձեռքով պատրաստած գինին օշնջով պակաս չէ եւրոպական ամենայարգի խմիչքից, եթէ չսանձ, որ մաքրութեան և անարատութեան կողմից դեռ գոչէ գերազանցում էլ է:

Բոլոր տները ունեն իրանց թոնիրը և լաւաշ հաց թխելու անհրաժեշտ իրերը: Թխելու ձէսերը ճիշտ նման են Հայաստանում տիրող ձէսերին:

Առհասարակ, առտնին կեանքը դեռ պահպանում է նախնի նահապետական պարզութիւնը, սակայն Հնդկաստան կրթեւեւ-

կողմերի չնորհիւ՝ վերջերս նորաձեւութիւնն սկսել են կամաց-կամաց մուտք գործել:

Ուշադրութեան արժանի է նոր-ջուղայեցին, ջերմ կրօնասիրութիւնը. ապացոյց դրան, նախկին կառուց 24 եկեղեցիները, որոնց 12-ն են միայն մնացել մինչև մեր օրը, և այն հաստատուն հաւատը, որով ընդդիմացան Շահ-սուլթանից յետոյ ծագած հազար ու մի տեսակ հալածանքներին հարբստահարութիւններին ու կապանքներին, և երբէք չը դաժանեցին այն խաչին, որ իշխում է բոլոր եկեղեցիների բարձրաբերձ գմբեթների և դանգակատների վրայ. մինչդեռ հայեր հետ տարադրուած վրայիք \*) և հէնց տեղացի կրակապաշտ պարսիկները՝ ամենաթեթիկ ներութեան իսկ չը դիմանալով՝ կրծնափոխ եղաս և ձուլուեցին մահմեդական տարրի հետ: Մօտաւորապէս 30 տունը կաթողիկ են, մի այդքան էլ բողոքական, իսկ մնացածը լուսաւորչական:

Առանց բացառութեան, ամեն մի նոր-ջուղայեցի ծնողի առաջին և սեպուհ պարտքն է համարուում տղային կամ աղջկան, հինգ տարեկանից յետոյ, դպրոց ուղարկել, և աղի արտասուք է թափում, երբ ստիպուած է լինում, ապրուստ հայթայթելու համար, տղային հանել դպրոցից առանց օւսուումն թամամելու:

Նոր-ջուղայեցին հպարտութեան չափ վեհանձն է, բայց դիւրագրգիւս և երկչոտ: Ծայրայեղ է թէ սիրոյ և թէ ատելութեան մէջ: Նա հիւրասէր է, չափազանց աշալուրջ է գործի մէջ և չը խարուող: Այս յատկանիչը երեւի ժառանգել է Սպահանի պարսիկներից, որոնց մասին Պարսկաստանի միւս քաղաքներումը մի առած կայ, թէ «սպահանցու մեռելիցն էլ պէտք է վախեցած»: Ընդունակութեան կողմից գովելի սրամտութիւն ունի, այնպէս որ Հնդկաստանի բոլոր եւրոպական դպրոցներում թէ դասի, թէ խաղի և թէ վարքի մէջ միշտ նոր-ջուղայեցի աշակերտներն են յառաջադէմ գտնուում:

Հնդկաստան կամ Ջաւա գաղթող նոր-ջուղայեցին, երբ բախտի բերմամբ յաջողուել է նրան հարստութիւն ձեռք բերել, չէ զլացել թէ կենդանութեան ժամանակը նպաստել և թէ մեռնելիս մի որոշ գումար կտակել իր հայրենիքում գտնուող որևէ հասարակական հիմնարկութեան, այնպէս որ Նոր-Ջուղայի բոլոր ազգային և եկեղեցական հաստատութիւնները նիւթապէս կախումն ունեն Հնդկաստանի և Ջաւայի անձեռնմխելի գումարների տոկոսներից:

\*) Մահմեդական վրացիների սերունդները այժմս բնակում են Սպահանի մօտակալ գիւղերում և ոչնչով չեն տարբերում բուն պարսիկներից:

Նոր-Ձուղայարձեռ բարբառների ու տարազների ցուցահանդէս լինելու հայերի մէջ տիրող բարբառն ընդհանուր ամամբ բաւակնումն է արարատեանին, սակայն տափակ արտասանութիւնք և գրաբարախառն: Ծերունիներն խօսում են պարսկերէսխառն, Հնդկաստանի «ուսեարձները՝ անգլիերէսախառն, Եւրոպականների հետ առնչութիւն ունեցողները՝ թրքահայ բաւակով, իսկ նոր սերնդի ստուար մասը, ազգ. երկսեռ դպրոցների շնորհիւ, գրական արարատեան բարբառով:

Կանայք հագնւում են Հայաստանից բերած հին տարազով (ամեան Ղարաբաղի), կէս եւրոպական և զուտ եւրոպական: զուխները ծածկում են Հին-Հայաստանի տարազով (այժմեան Ղարաբաղի), վրաց, պարսկական, եւրոպական և «բուշեփ» կոչուած անշնորհք ձևով: Դուրս ելնելիս ծածկւում են սպիտակ սաւառով—չարսաւով, իսկ վերջերս պարսիկներից մտել է և սև ծածկոցի գործածութիւնը: Տղամարդիկը հագնւում են հին ու նոր պարսկական, կիսաեւրոպական և զուտ եւրոպական տարազներով: գլուխներն էլ ծածկւում են նոյնպէս տարբեր ձևերով, այն է Ղարաբաղի և բաղմատեօակ պարսկական և եւրոպական տարազներով: Սակայն նոր սերունդը, թէ օրիորդները և թէ տղաները, հագնւում են կէս եւրոպական ձևով:

Տանեակ տարիներ առաջ, Հնդկաստանում և Ջաւայում գտնուող մի քանի նոր-Ձուղայեցիների ձևք բերած հոշակը և առասպելական հարստութիւնը, վաղուց առիթ է տուել բոլոր նոր-Ձուղայեցիներին, զգուանքով վերաբերուել դէպի հայրենիքում ունեցած համեստ պարապմունքը և դիմել Հնդկաստան պանդխտութեան: Հետեւաբար, հէնց այս հանգամանքն է միակ պատճառը, որ Շահաբասի ժամանակուայ հայերի ձեռքում և զո՞ւտ արհեստները և առևտուրը կամաց-կամաց անցել և անցնում են պարսիկների ձեռքը, այնպէս որ յաճախ հայերի սեփական խանութներն ու կրպակները պարսիկներից են վարձուում: Իսկ նոր-Ձուղայեցուն մնացել է միայն՝ կամ անձամբ Հնդկաստան գաղթել և կամ որդուն այնտեղ ուղարկելով աչք տնկել, մինչև որ ուսումն աւարտէ և մի պարապմունք ձեռք բերելով կարողանայ մի քանի յետ գցած ուսուցիչներով կերակրել իրան:

Հնդկաստանը նոյն դերն է խաղում Նոր-Ձուղայի համար, ինչ որ երբեմն Պոլիսը թիւրքաց Հայաստանի: Կարծես մի հասարակական պահանջից, մի կարևոր անհրաժեշտութիւնից, մի հոգևոր ու սեպուհ պարտականութիւնից գրդուած՝ նոր-Ձուղայ-

նցի զօրեղ և առոյգ արհեստաւորը թողնում է անօրեայ պարէնը հայթայթելու պատուաւոր պարապմունքը, որաւ գնում հայրենական ժառանգութիւն հասած օջախի մի պար և՛ երեւակայական ոսկու և արծաթի կոյտերի փայլի շաղկապ մը՝ ձեռք առնում պանդխտութեան գաւազանը:

—Ո՞ւր բարով,

—Հնդկաստան,

—Ո՞ւմ յուսով,

—Աստուած ողորմած այ:

Այսպէս անասելի նեղութիւններից ու տառապանքները և պարտք վերցրած դումարը բոլորովին ծախսելուց յետոյ, մեր պանդուխտը վերջապէս հասնում է ցանկալի Աւետեաց երկիրը, բայց փոխանակ մեղրի ու կաթի, հանդիպում է մի կարգ եղիպտական տեղանքների: Տեղական հանգամանքներին ու լեզուին անփորձ, անծանօթ և անտէր, անօգնական թափառում է երկար տարիներ Հնդկաստանի զանազան քաղաքներում, բայց ամեն տեղ մերժում և անյաջողութեան պատահում:

Օր ըստ օրէ վաղահաս ծերութիւնը մի կողմից, ընտանիքի կարօտը միւս կողմից, սրանց աւելացրու և կլիմայի վատառողջութիւնը, այս բոլորը հալ ու մաշ են անում մեր յուսախաբ բախտախնդրին: Երբեմն վճռում է վերադառնալ հայրենիք, բայց ի՞նչ երեսով, երբեմն որոշում է մնալ պանդխտութեան մէջ, բայց ի՞նչ յոյսով: Երկար այսպէս մնում է երբեման ու տատանման մէջ, առանց մի վերջաւորութեան գալու Դարձեալ հայրենիքի կարօտը և ընտանիքի բուռն սէրը յաղթում են բոլորին և մեր պարոնը սկսում է մուրացկանութեան ձեռք պարզել եկեղեցիներին և յայտնի հայ առետրական տներին: Վերջապէս գէսից-դէնից մի քանի ուսիներ ձեռք գցելով ճանապարհուում է դէպի հայրենիք: Բոլոր ունեցածը ծախսելով և մի բան էլ ուղեկիցներից պարտք վերցրած՝ հասնում է իր տունը, բայց «ի՞նչ տեանի լաւ, որ արդար լինի և ո՛չ անիրաւ» — բնակարանի մնացած մասն էլ դրաւ դրած, զաւակների մէկը կամ երկուսը «հայրիկ» կանչելով վախճանուած, դեռահաս կիւնը պառաւած, իսկ ինքը առաջուան պարապմունքը շարունակելու անընդունակ և անկարող: Մեր բախտախնդիր պարոնը հիմա և միայն հիմա է հասկանում իր «սխալ հաշիւը»: Այս վերադարձողի վիճակն է, իսկ ինչ վերաբերում է պանդխտութեան մէջ մինչև ի մահ դեգերողի վիճակի մասին, ընթերցողին ևս թողնում երեսկայել:

Ինչպէս որ չափահասների, նոյնպէս և փոքրիկների վրայ:

կարծես սրբազան պարտք է դրուած այցելել Հնդկաստանը, որպէս մահմեդականների պարտքն է ուխտագնացութիւնը իրանց մարգարէի գերեզմանին: Դեռ երեսան չը ծնած մայրը ուխտուած է, որ եթէ երեսան տղայ լինի, կ'ուղարկէ Հնդկաստան, «գնայ մարդ դառնայ»: Իսկ երբ տղան հասնուած է տասն տարեկանի, ծնողները 40—50 թուման պարտք են վերցնում, պատրաստութիւններ տեսնում և երեսային ճանապարհ դրուած դէպի Կալկաթա, որ «գնայ ուսում առնի և իր արեին ձէն տայ»: Այսպիսով նոր-ջուղայեցի ծնողը «դուրս ա գալիս պարտականութիւնից» և հանգիստ խղճով սպասում է միթիթարութեան (Անշուշտ բացատրութիւններ միշտ լինում են):

Ամեն գարնան և աշնան ճանապարհ են ընկնում մի քանի կարաւաններ, իւրաքանչիւրը բաղկացած լինելով 8—10 երեսաններից և 3—4 ծնողներից կամ խնամատարներից, որոնք անտանելի նեղութիւններ կրելուց յետոյ՝ Բուշուսի ժայռոտ լեռների և Պարսկային ծոցի վրայ, հասնում են ուխտատեղին՝ Կալկաթա և ըստ սովորութեան դիմում «Սէյրաթխանայ» հիւրանոցը \*): Քանի որից յետոյ, իւրաքանչիւր ծնող, կամ խնամատար սկսում է սրան-նրան միջնորդ գցել «Հայոց Մարդասիրական ձեմարանի» վարչութեան, եկեղեցու երէցփոխանութեան և զանազան ազգեցիկ ու հարուստ անձերին, որպէս զի հետը տարած տղային տեղաւորէ մի դպրոցում: Շատ անգամ պատահում է, որ վեց ամիս կամ մի ամբողջ տարի, այսպէս մուրացկանութեամբ ապրելով օր է միջնցնում և ո՛չ ոք չէ զըտնըւում օգնութեան ձեռք կարկառող: Վերջապէս, հազար ու մի թուք ու մուր ուտելուց և հոգին բերանը հասնելուց յետոյ, եկեղեցին կամ մի բարեպաշտ տիկին գլխավոր խեղճ երեսային, տեղաւորում է նրան վերոյիշեալ հայոց միակ դպրոցում «ուսում առնելու»: Այս նախապաշարուած, հայատեսաց և օր աւուր յետադիմող դպրոցի մասին աւելորդ եմ համարում այստեղ ծանրանալ, յօդուածիս նիւթից դուրս լինելուն պատճառով:

Այսպէս, Նոր-Ջուղայից տարեկան առնուազը 50 մեծ և փոքր տղամարդիկ գաղթում են Հնդկաստան, դրանցից առ աւելին 5 հոգին «մարդ են դառնում» այնտեղ, 5 հոգին էլ վերադառնում տեղս, յաճախ թէ հոգեպէս և թէ ֆիզիկապէս ապականուած, անժուժկալ կեանքի շնորհիւ Իսկ մնա-

\*) Հնդկաստանի հարուստ հայ խօջաններից մէկի կառուցած այս հիւրանոցը իր դրամագլխով յատկացրած է բոլոր աղքատ հայ պանդուխտներին՝ որպէս ձրի ասպնջարան, մինչև երեք ամիս ժամանակ, երբեմն աւելի ևս:

ցեալ 40 հողին տաք ու խոնաւ կլիմայի և կեանքի տարրեր պայմանների շնորհիւ ոչնչանում և իսպառ անյայտանում են:

Հագարաւոր այսպիսի դառն փորձերից յետոյ էլ, դեռ նոր-ջուղայեցին չէ կարողացել սթափել իր կորստաբեր նիրհից և համոզուել որ, ոչ թէ Հնդկաստան գնալով կամ երեխայ այնտեղ ուղարկելով, այլ հէնց իրանց հայրենիքում ապրուստի միջոց հնարելով և ունեցածը ձեռքից չը տալով միայն կարող են դառնալ «Ոսկի շինողներ»:

ՏԻԳՐԱՆ Ա.ԲԳԱՐԵԱՆՑ